



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 5 ՅՈՒՆԻՍ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 16

ԱՂԹԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ վիս, ով Աստուած, քեզի ապաւինած եմ:
Դուն ես Տէրս, քեզմէ վար ուրախութիւն չունիմ:
Ինչ փառահեղ են երկրի վրայ սուրբերը.
ամբողջ փափաքս է՝ անոնց հետ ըլլալ:
Տէր, դուն ես իմ ժառնագութիւնս, ինձի վիճակուած բաժինը,
եւ իմ բաժինս դուն պիտի տաս ինձի:
Ինձի ելած վիճակը ինչ հաճելի է ինձի,
իրաւամբ շնորհք մը՝ որ վիս խնդութեամբ կը լեցնէ:
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդով կ'առաջնորդէ վիս,
նոյնիսկ գիշերը վիս կը խրատէ խղճմտանիքս միջոցաւ:
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.
Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ վիս սասանեցնել:
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է, հոգիս ցնծութեան մէջ է,
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի, որովհետեւ գիտեմ թէ վիս
մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:
Կեանքի ճամբան ցոյց կու տաս ինձի. ներկայութիւնդ վիս ցնծութեամբ կը լեցնէ,
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ՄԱՐԿՈՍ

1:3-9

ԳՈՀՈՒԹԻՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՅՈՅՄԻՆ ՀԱՄԱՐ (1:3-9)

Պեպրոս Առաքեալ այս նամակով պարզապես նամակ չէ որ կը գրէ հաւաքացեալներուն, այլ՝ Քրիստոսի թելադրութիւնն ու պարուերն է որ կը կարարէ. «*Կը սիրես զիս, արածէ ոչխարներս*»: Պեպրոս Առաքեալ իր նամակին սկիզբին յիշեցուց իրեն ժամանակակից հաւաքացեալներուն, ինչպէս նաեւ այսօր, ու բոլոր ժամանակներու հաւաքացեալներուն, թէ ընտրուած ենք Հօր Աստուծոյ կողմէ, մաքրուած Քրիստոսի արեամբ, եւ սրբուած Սուրբ Հոգիով: Այս իսկ է ամբողջ հիմքը մեր փրկութեան: Բանալին հասկնալու եւ ճանչնալու զԱստուծոյ ու Անոր պարաստած փրկութեան ծրագիրը: Ահա այդ ծրագրի յոյսին փակ է, որ Պեպրոս Առաքեալ շարունակելով իր նամակը պիտի ըսէ. «**Օրհնեալ է Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առաքողութեամբ մեզ վերստին ծնաւ**» (3 հմբ): Ընտրեալութեան, երախտագրութեան արքայապարտութիւնն է ուղղուած Աստուծոյ, որ երբեք չի նայեց Իր Միածինը դրկելու աշխարհ, որպէսզի Անոր գոհագործումով մեզ փրկէ ու ազատէ մեր մեղքերէն: Այս բոլորի փորձառութիւնը ունեցող Պեպրոս Առաքեալն է ըսողը, որովհետեւ ունեցաւ այդ վիճակը:

Հետաքրքրական է, որ Պեպրոս Առաքեալ պարզապէս փառաբանութիւն չէ որ կ'ընէ, այլ՝ Աստուծոյ անբանական ճշմարտութիւն մըն է որ կը փոխանցէ: Յարակօրէն ցոյց կու տայ, որ այս Աստուծոյ որ կը ճանչնայ Աստուծոյ մը չէ պարզապէս, այլ՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հայրը: Ինչ որ այսօր մարդիկ կը հաւաքան Աստուծոյ մը, բայց ով է այդ ճշմարիտ Աստուծոյ, եթէ ոչ Յիսուս Քրիստոսի Հայրը: Այս ձեով Յիսուս Քրիստոսը ճանչնալու: Ինչպիսի Աստուծոյ մըն է որ կը ճանչնաւ: Երբոր չես ճանչնար Ան որո՞ւ դրկեց Հայրը (Յովհ 5:36-40): Ուրեմն, նախապայման է Հայրը ճանչնալու համար պէտք է որ Որդին ալ ճանչնալ:

Հայրն Աստուծոյ Իր առաքողութեամբ մեզ վերստին ծնաւ: Առաքողութիւն: Ոչ միայն ողորմութիւն, այլ՝ առաքալէս: Ինչ որ կ'ընենք այդ բոլորը Աստուծոյ ողորմութեամբ, մինչեւ իսկ այդ նոյն ողորմութեամբ մեզ վերստին ծնաւ: Վերին ծնունդ, հոգեւոր ծնունդ: Այն ինչ նոյնը պիտի ըսէր Քրիստոս Նիկողիմոսին. «Պէտք է որ վերստին ծնիս որպէսզի Երկինքի արքայութիւնը ժառանգես» (Յովհ 3:1-12): Պէտք է որ վերստին ծնիս ջուրէն եւ Հոգիէն: Ահա այս բոլորը փրկելու կ'ունենան Աստուծոյ առաքողութեամբ, որուն համար չենք աշխատած, այլ ձրի պարգեւ մըն է որ կը փրկուի: Ինչո՞ւ պէտք է որ վերստին ծնինք, որովհետեւ մեռած ենք, ու պէտք է վերստին ծնինք: Ինչո՞ւ: Որպէսզի «Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առնելովը ունենանք այն կենդանի յոյսը» (3 հմբ): Որ կը նշանակէ այդ յոյսը կրնամ ունենալ, եթէ երբեք Յիսուս Քրիստոս յարութիւն առած է: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ: Այլապէս եթէ Յիսուս Քրիստոս յարութիւն առած չէ, յոյս չունիմ կը նշանակէ: Պեպրոս Առաքեալ ունի հաւաքքը որ Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ: Այո: Երբ երբ անգամ Քրիստոս պիտի հարցնէր կը սիրես զիս, արածէ ոչխարներս (Յովհ 21:15-17): Ահա Քրիստոսի յարութիւնը հաւաքացեալը փոխադրեց ու կը փոխադրէ յուսահատութենէն դէպի կենդանի յոյսի վիճակի: Այս կենդանութեան յոյսն է որ նաեւ մեզի ժառանգել պիտի տայ անեղծ, անարար եւ անթառամ կեանքը: Պեպրոս Առաքեալ երբ կ'ըսէ «ժառանգել» արդէն կը նշանակէ մենք չենք շահած, այլ՝ ժառանգած: Ինչպէս որ հարստութիւն մը որ մենք կը ժառանգենք անոր համար չենք աշխատած, այլ փրկուած է մեզի: Նոյնպէս ալ այս կենդանի յոյսով ժառանգելու այդ կեանքը: Այդ ժառանգութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ նոյնիքն Քրիստոսը: Ժառանգելու Քրիստոսը եւ նմանելու Իրեն: Իր հետ ըլլալու, Իր ներկայութիւնը վայելելու, Իր ձայնը լսելու: Իր սէրը վայելելու: Ինչպէս պիտի ըսէ Մաղմուսերգուն. «Դուն ես իմ ժառանգութիւնս» (Մաղմուս 16):

Եւ ահա գալիք նեղութիւններուն ու փորձութիւններուն դիմաց Տէրը Իր զօրաւոր բազուկով պիտի պահէ մեզ (5 հմբ): Ահա Պեպրոս Առաքեալ կը վստահեցնէ, մանաւանդ՝ այն հաւաքացեալներուն, որոնք քիչ մը փրկման են իրենց կրած փորձութիւններուն համար, բայց ուրախեցէք, ու մանաւանդ վեր նայեցէք, այն փրկութեան որ Տէրը պարաստած է, եւ որ պիտի յայտնուի: Բայց արդէն Քրիստոս վստահեցուց իր աշակերտներուն ըսելով. «*Աշխարհի վրայ նեղութիւն պիտի ունենար, բայց քաջակերուցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին*» (Յովհ 16:33):